

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ (1759—1798)

ԺԸ դարի երկրորդ կեսը և ԺԹ դարի սկիզբը մեր ժողովրդի պատմության ամենաճուզախով և դժվարին ժամանակներից է: Մի քանի տերությունների ռազմա-քաղաքական և տնտեսական շահերն այս շրջանում կրկին բախվում են Հայաստանի տարածքում, և Հայ Եկեղեցին ու նրա շուրջ խմբված ժողովուրդն ստիպված էին գոյատևելու համար ավելի լարված ճիգեր գործադրել: Միաժամանակ, Սիմեոն Երևանցի, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսների և նրանց շրջապատող եկեղեցական անձանց եռանդուն գործունեության շնորհիվ, ԺԸ դ. երկրորդ կեսին էջմիածինը դարձավ հայ գրական-մշակութային զարթոնքի կենտրոնը:

Տպարանը, թղթի գործարանը, ստվար և աշխույժ միաբանության առկայությունը մշակութային նոր արժեքների ստեղծման շարժառիթ եղան:

Մեր ժողովրդի և Եկեղեցու այս շրջանի պատմության պահպանված աղբյուրները համեմատաբար շատ են: Այս ժամանակահատվածն անհամեմատ ավելի լավ է ուսումնասիրված, քան, թեկուզ, նույն ԺԸ դ. առաջին կեսի պատմությունը, սակայն արվածն էլ դեռևս շատ հեռու է բավարար համարվելուց: Հետևաբար, յուրաքանչյուր նոր աղբյուրի հրապարակումն ու գիտական շրջանառության մեջ դնելը կարևոր և անհրաժեշտ է:

Առաջարկվող ժամանակագրության մեջ արձանագրված են Հակոբ Շամախեցի կաթողիկոսի ձեռնադրած եպիսկոպոսների անվանացանկը և Սիմեոն Երևանցի ու Ղուկաս Կարնեցի կաթողիկոսների կատարած բոլոր ձեռնադրությունները՝ գրանցված օրացուցային ճշգրտությամբ: Ձեռնադրվածների մեծ մասը կարևոր դեր են կատարել իրենց ժամանակաշրջանում և, հատկապես, դավիթ-դանիելյան պայքարի ընթացքում:

Այս աղբյուրը նշված շրջանի էջմիածնական հոգևոր գործիչների կենսագրությունների թվականների մի կարևոր տեղեկատու է, և մեր հրապարակումը նպատակ ունի նյութ մատակարարել նրանց կենսագրություններով հետաքրքրվող մասնագետներին:

Ժամանակագրությունը, որ պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2882 ձեռագրում, ստեղծվել է հետևյալ հանգամանքներում. 1763 թ. ապրիլի 20-ին Սիմեոն Երևանցի կաթողիկոսը Մկրտիչ ավագ սարկավագին կարգադրել է մի մատյանում գրանցել իր կատարելիք բոլոր ձեռնադրությունները: Վերջինս գրառումն սկսել է մատյանի երկրորդ թերթից, իսկ առաջինի վրա նշանակել է իր ստացած ձեռնադրությունները՝ Մինաս Ա Անկեցի կաթողիկոսի օրոք, 1753 թ. մարտի 7-ին՝ կիսասարկավագ, իսկ Աղեքսանդր Բ Բյուզանդացու օրոք, 1754 թ. հոկտեմբերի 9-ին՝ ավագ սարկավագ: Թերթի ազատ մնացած մասում գրել է Սիմեոն Երևանցուց ստացած իր մյուս հոգևոր աստիճանների մասին՝ 1763 թ. նոյեմբերի 9-ին՝ քահանա, 1765 թ. նոյեմբերի 6-ին՝ վարդապետ, 1768 թ. հունիսի 15-ին՝ եպիսկոպոս: Այս դեպքերում նշել է նաև իր հետ միասին ձեռնադրվածների անունները:

Նախորդ կաթողիկոսներից ստացած երկու ձեռնադրության պատճառով ձեռագրում պահպանված մի թերթիկի վրա ժամանակագրությունը բնորոշված է այսպես. «Ժամանակագրութիւնք ձեռնադրութեանց Մինասայ, Յակոբ, Սիմէօն և Ղուկաս կաթողիկոսաց. և ի սոցանէ ձեռնադրեալ եպիսկոպոսաց, վարդապետաց և սարկաւագաց՝ ըստ կարգի շարունակեալ ի ՌՄԲ (1753) ամաց հետէ ցթուին հայոց ՌՄԽԷ (1798)»: Նույն սխալը կրկնել է նաև Մատենադարանի ձեռագրացուցակը՝ մատյանը թվագրելով 1753—1798 թվականներով (տես Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Ա, Ե., 1656, էջ 895): Իրականում ձեռագիրը գրված է 1763—1798 թվականներին:

Սիմեոն Երևանցու կատարած ձեռնադրությունների արձանագրումից հետո Մկրտիչ եպիսկոպոսը շորապան Թոմա վարդապետին պատկանած Նարեկի կողին տեսել է Հակոբ Շամախեցու ձեռնադրած եպիսկոպոսների ցանկը և, մատյանի սկզբում ազատ թուղթ չունենալու պատճառով, այդ ցանկն ընդօրինակել է նա էջի առաջին սյունակում, հնա-

բավոր այլ վրիպումների գրանցման համար ազատ թողնելով երկրորդ սյունակը: Թերթի մյուս երեսից սկսվում են Ղուկաս Կարնեցու ձեռնադրությունները, որոնք Մկրտիչ եպիսկոպոսի մահից (1788 թ. մարտի 4—սեպտեմբերի 8 միջոցում) հետո շարունակել է Կարնեցու սպասավոր Գալուստ սարկավագը: Ժամանակագրությունն ընդհատվում է 1798 թ. փետրվարի 2-ով, և 58 թերթանոց ձեռագրի (30,5. 21,7 մեծությամբ, երկսյուն, նոտրգիր, էջում 37 տող) հաջորդ 50 թերթը մնացել է չգրված: Ղուկաս կաթողիկոսը դրանից հետո ապրել է մոտ երկու տարի (մահ. 1799 թ. դեկտեմբերի 28-ին): Սխալ կլիներ մտածել, որ հիվանդ վիճակի պատճառով այդ ընթացքում նա որևէ ձեռնադրություն չի կատարել, ուստի պետք է կարծել, որ ընդհատումը պայմանավորված է մեզ անհայտ մի այլ պատճառով: Հետագայում արդեն ժամանակագրությունը չի շարունակվել, երևի, ԺԹ դ. սկզբի քաղաքական խառն վիճակով պայմանավորված դավիթ-դանիելյան պայքարի հետևանքով:

Քանի որ Մինաս Ա Ակնեցի (1751—1753) և Աղեքսանդր Բ Բյուզանդացի (1753—1755) կաթողիկոսների շրջանից գրանցված են միայն Մկրտիչ եպիսկոպոսի ստացած երկու ձեռնադրությունները, մենք ժամանակագրությունը վերնագրում ենք. «Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց Յակոբ Շամախեցի, Սիմէոն Երևանցի և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսաց Էջմիածնայ» (1759—1798) ձևով: Միաժամանակ արձանագրում ենք, որ Շամախեցու ձեռնադրությունների մասն ամբողջական չէ առանց թվականների հիշատակման գրանցված են միայն եպիսկոպոսական աստիճան ստացածների անունները:

Հետևելով ձեռագրին, հրապարակման սկզբում թողել ենք Մկրտիչ եպիսկոպոսի ստացած ձեռնադրությունների մասը, որոնցից վերջին երեքը կրկնվում են նաև հետագա շարադրանքում. ժամանակագրական կարգը պահպանելու նկատառումով Շամախեցու ձեռնադրած եպիսկոպոսների ցանկը, առաջ բերելով, դրել ենք դրանից հետո: Իսկ մյուսները տրվում են ձեռագրի կարգով, ուղղելով միայն առաջին գրչի վրիպում-ետուառաջությունները: Մկրտիչ եպիսկոպոսի գրած մասում չնչին բացառություններով, իսկ Գալուստ սարկավագի բաժնում անխտիր, նույն օրը ձեռնադրվածները լուսանցում արաբական թվանշաններով նշանակված հերթական համարներ ունեն: Այս համարակալումը պահպանելուց բացի, նշանակել ենք վրիպած հատվածների համարակալումը՝ դրանք վերցնելով ուղղանկյուն փակագծերի մեջ: Օգտագործումը դյուրացնելու նպատակով յուրաքանչյուր ձեռնադրվածի անուն գրել ենք նոր տողից: Ձեռնադրությունների հերթական համարները, իրարից հեշտությամբ զատելու համար, նշանակված են հոծ տառերով, իսկ յուրաքանչյուր տարվա ձեռնադրությունները նախորդ և հաջորդ տարիներից առանձնացված են տողերի ավելի լայն միջակայքով: Մարադրանքում օգտագործված կոր փակագծերը հեղինակինն են, իսկ թվականների և թվանշանների նույնպիսի փակագծերի մեջ առնված վերծանումները, ինչպես նաև կետադրությունը՝ մերը: Բնագրում «վեհ» բառը ամենուր գրված է այսպիսի ppp նշանով: Այդ և մյուս համառատումներն ու կրճատումները բացել ենք առանց հատուկ ծանոթագրության: Ծանոթագրություններից խուսափել ենք անգամ ամենաերևելի գործիչների նկատմամբ, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, այս ժամանակագրությունն ինքնին մի տեղեկատու աղբյուր է, որի վկայությունները պետք է օգտագործվեն ԺԸ դարի երկրորդ կեսի և ԺԹ դարի սկզբի էջմիածնական գործիչների կենսագրությունների շարադրման համար:

ԳԵՎՈՐԳ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՐԿԱՒԱԳ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՅԱԿՈԲ ՇԱՄԱԽԵՑԻ, ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԵՒ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԷՋՄԻԱԾՆԱՅ (1759—1798)

(Մատենադարանի ձեռ. թիվ 2882, էջ 1ա—8բ)

[Ձեռնադրութիւնք Մկրտչի եպիսկոպոսի].

Մինաս ընդհանրական կաթողիկոսին.

Ի ՌՄԲ (1753) թուոջն մերում և ի Մարտ ամսոյ Է (7)-ումն, յօր Անառակի կիւրակէին, հրամանաւ Վեհին և ձեռնադրութեամբ լուսարար Եղիազար ծերունազարդ հայր վարդապետին եղաք կիսասարկաւագ՝

[1] Ես՝ մեղսաներկ Մկրտիչս, և

[2] հոգեկից եղբայրն իմ տիրացու Մինասն:

Եւ ընդ մեզ եղեալ սարկաւագունքն են այսոքիկ.

[3] Տիրացու Մեսրոպն Ըզնաբերդցի.

[4] Տիրացու Երեմիայն յՕշականցի.

[5] Յարութիւնն Գեանջեցի.

[6] Սէթն Էջմիածնեցի.

[7] Թադէոսն Դիարբեքրցի.

[8] Յակոբն Կարնեցի.

[9] Սողոմօնն Քրտստանցի.

[10] Մխիթարն Մեղրեցի.

[11] Մկրտիչն Եղվարդեցի.

[12] Եւ քահանայ ոմն տէր Անտօն ևս Եղվարդեցի. որոց Տէր տացէ վայելել բարեաւ զառեցեալ սուրբ կարգսն: Ամէն:

Աղէքսանդր ընդհանրական կաթողիկոսին.

Ի ՌՄԳ (1754) թուոջն մերում և ի Հոկտեմբերի ամսոյ Թ (9)-ումն, որ էր հինգերորդ կիւրակէն որ զկնի Սրբոյ Խաչին, հրամանաւ Վեհին և ձեռնադրութեամբ ժամօրհնօղ Դիարբէքիրցի Յակոբ վարդապետին, առաք զսուրբ կարգ աւագ սարկաւագութեան.

[1] Ես՝ մեղսամներկ Մկրտիչս.
[2] Եւ հատորն հոգւոյս Տիրացու Մինասն.
[3] Յօսէփն Առնճեցի.
[4] Պետրոսն և
[5] Կիրակոսն եւ Առնճեցի.
[6] Առաքելն Ծամբեցի.
[7] Պօղոսն Գժաձորեցի, և կիսասարկաւագունք՝
[8] Մկրտիչն Ծօօթեցի.
[9] և Պետրոսն Սուրմարեցի. որոց Տէր տացէ բարեաւ վայելել ըստ իւրում հաճոյին. ամէն:

1բ // Սիմէօն ընդհանրական կաթողիկոսին.

Ի ՌՄԺԲ (1763) թուոջն մերում և ի Նոյեմբերի Թ (9)-ումն, որ էր հինգերորդ կիւրակէն որ զկնի Սրբոյ Խաչին և տօնի սրբոց Հրեշտակապետացն, ձեռնադրեցաք քահանայ ի սրբազան հօրէն մերմէ Վեհէն.

[1] Տէր Երեմիայն.
[2] Տէր Մկրտիչս.
[3] Տէր Մեսրօպն և
[4] Տէր Պօղոսն:

Եւ ընդ մեզ եղեն սարկաւագ՝

[5] Ղուկիանոսն և
[6] Ստեփանոսն, և
[7] Յօհաննէսն՝ ջահընկալ:

Իսկ Աստուծով եղանելն մեր ի քահանայից. նախ տէր Երեմիայն մատոյց պատարագ ի Դեկտեմբերի Թ (9), որ էր տօն Յղութեան սրբոյ Աստուածածնին ի յԱննայէ, օրն երեքշաբթի, ի շաբաթապահոջն, որ Սուրբ Յակոբայ կոչի: Եւ ի սոյն շաբաթու հինգշաբաթ օրն ես՝ տէր Մկրտիչս մատուցի զպատարագ, որ էր ի Դեկտեմբերի ԺԱ (11) և տօն առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի: Եւ <և> Սուրբ Յակոբայ շաբաթ օրն՝ տէր Մեսրօպն, իսկ ի կիւրակէին՝ տէր Պօղոսն. որոց Տէր տացէ վայելել բարեաւ զառեցեալ սուրբ և մաքուր կարգսն:

Ի ՌՄԺԴ (1765) թուոջն և ի Նոյեմբեր ամսոյ Զ (6), ի յԻններորդ կիւրակէին, որ զկնի Սրբոյ Խաչին, վերոգրեալ սրբազան հայրն մեր Վեհն ետ մեզ՝ երից համաշունչ եղբարցս՝

[1] Երեմիա.
[2] Մկրտիչ և
[3] Մեսրոպ աբեղայիցս՝ զիշխանութիւն մասնաւոր վարդապետութեան: Եւ ձեռնադրեաց ընդ մեզ սարկաւագ՝
[4] զՅովհաննէս ջահընկալն, զոր և Իսահակ անուանեաց. և ըստ հոգւոյ եղբայրն նորին
[5] զմիւս Յովհաննէսն. զորս Տէր արժանացուսցէ ի պաշտպանութիւն իւրաքանչիւր սրբոյ կարգի:

Ի ՌՄԺԷ (1768) թուոջս և ի Յունիսի ԺԵ (15) ի չորրորդ կիւրակէին Եղիական Յիսնակին, վերոգրեալ սրբազան հայրն մեր Վեհն զիս՝ զյետնեալ ծառայս և որդիս իւր

[1] զՄկրտիչ նուաստ վարդապետս ձեռնադրեաց եպիսկոպոս. նաև
[2] ըզԿեղու Սուրբ Կարապետի վանից առաջնորդ Յօհան վարդապետն՝ ի վերա նոյն վանիցն.
[3] Եւ զԱստապատեցի Միքայէլ վարդապետն՝ յառաջնորդութիւն նոյն գեղջ Ստեփաննոսի Նախավկայի վանիցն, զորս Տէր պահեսցէ ի հաճոյս իւր:

5ա // **Ի տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսէն Շամախեցւոյ թէ քանիցս ձեռնադրեցան եպիսկոպոսք և որքան, ցուցանին աստ ի ներքոյ՝ ի ՌՄԸ (1759) թուոյն հետէ մինչև ի ՌՄԺԲ (1763) թիւն:**

Առաջին կարգ.

[1] Անդրէաս Կարբեցի,
[2] Զաքարիա Կաղզվանցի,
[3] Աբրահամ Եղեգաձորցի,
[4] Յովհաննէս Պոնդացի,
[5] Կարապետ Նախիջևանցի,
[6] Գրիգոր Ծամբեցի,
[7] Գէորգ Եւդոկացի:

Երկրորդ կարգ՝

[1] Կարապետ Սեբաստացի,
[2] Դաւիթ Էզնկացի,
[3] Կարապետ Կամախեցի,

Երրորդ կարգ՝

[1] Մարտիրոս Ակնցի,
[2] Պետրոս Մշեցի,
[3] Սարգիս Ակնցի և
[4] Յօհան Գեղամացի:

Չորրորդ կարգ՝

[1] Խաչատուր Ուրհայեցի:

Հինգերորդ կարգ՝

[1] Թօմայ Ագուլեցի,
[2] Զաքարիա Բաղիշեցի,
[3] Յարութիւն Հզուեցի և
[4] Կարապետ Կարնեցի:

Վեցերորդ՝

[1] Մկրտիչ Նախիջևանեցի:

Եօթներորդ՝

[1] Յովսէփ Կեսարացի, որ է Նիւսացի:

Ութերորդ կարգ՝

[1] Սիմէօն և
[2] Յովակիմ միաբանք սրբոյ Երուսաղէմայ:

Ասացէք Աստուած լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալ շնորհապատ Թօմա վարդապետին, որ վերոյ գրեցեալն ի նորին Նարեկի կողոջն տեսեալ վեր առի և իմ սրբազանի քարոզգրգոջ կողումն տափակ գրով ի վերն գրեցուցի, իսկ իմ սխալեալ, աստ գրեցի. թողութիւն արարէք ինձ:

Սիմէօն Սրբազանն

Ի ՌՄԺԲ (1763) թուոջն և յԱպրիլի ամսոյ Ի (20)-ումն, ի հինգերորդ կիւրակէի յինանցն, որ էր տօն Երևման Սրբոյ Խաչին, հոգևոր հայրն մեր՝ Վեհն օծաւ ընդհանուր կաթողիկոս ամենայն Հայոց:

Արդ, զկնի օծման իւրոյ, Վեհըս մեր զորս ձեռնադրեաց՝ թէ զեպիսկոպոսս թէ զքահանայս և թէ զայլ աստիճանաւորս, աստ ի ներքոյ ցուցանեմք. որ ի վարդապետութենէն իւրմէ մինչև ցայժմ ոչ զոք էր ձեռնադրեալ ոչ զքահանայս և ոչ զայլ աստիճանաւորս:

Նախ՝ ձեռնադրեաց.

1. զՄովսէս վարդապետն եպիսկոպոս, որ էր ի գործ նուիրակութեան սրբոյ Երուսաղէմայ ի Կարին՝

ի Մայիսի ԺԱ (11)-ին և ի Հոգեգալուստ կիրակէին:

Երկրորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զմիաբանսն սրբոյ Աթոռոյս

1. զՂուկաս վարդապետն՝ զառաջնորդն Զմիւռնոյ,
2. զԵսայի վարդապետն՝ զնուիրակն Եւդոկիոյ,
3. զՊետրոս վարդապետն՝ զնուիրակն Տիգրանակերտու. ի տօնի Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, օրն երեքշաբթի, Յունիսի ամսոյ ԺԷ (17):

Երրորդ՝ ձեռնադրեաց

[1] զԵրեմիայ,
[2] զՄկրտիչ,
[3] զՄեսրոպ և
[4] զՊօղոս սարկաւագունսն՝ աբեղայս,
[5] զՂուկիանոսն և
[6] զՍտեփաննոսն՝ սարկաւագունս, և
[7] զՅովհաննէսն՝ ջահընկալ. ի Նոյեմբերի Թ (9) և ի կիրակէին, որ զկնի տօնի սրբոց Հրեշտակապետացն:

Ի ՌՄԺԳ (1764) թուոջն.

Չորրորդ՝ ձեռնադրեաց զերիս եպիսկոպոսունս.

1. զՍտեփաննոս վարդապետն՝ զառաջնորդն վանից Սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի,
2. զԻսահակ վարդապետն՝ զառաջնորդն Թամարզայու, և՝
3. զԳասպար վարդապետն՝ զառաջնորդն Շնքուշու. Վարդավառի բարեկենդան կիրակէին, Յուլիսի ԺԱ (11):

Հինգերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԱնտոն ճգնաւորն,
2. զՌէթէոս Աշտարակեցին,
3. զՍտեփաննոս Զուղայեցին, և
4. զՈւրհայու առաջնորդ Յօհան վարդապետն. սրբոյ Յակոբայ Բարեկենդան կիրակէին, ի Դեկտեմբերի ԺԲ (12):

Ի ՌՄԺԴ (1765) թուոջն.

Վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԿարնոյ առաջնորդ Բաղտասար վարդապետն,
2. զՀասանղալայու Աւետիք վարդապետն և
3. զսրբոյ Աթոռոյս միաբան Սանահնեցի Գրիգոր վարդապետն. ի սուրբ Զատկին, յԱպրիլ ամսոյ Գ (3):

Եօթներորդ՝ ետ զծայրագոյն գաւազան

2բ [1] տեղապահ Մկրտիչ վարդապետին // և
[2] Կաղզվանցի Զաքարիայ վարդապետին. Երևման Սրբոյ Խաչի կիրակէին, ի Մայիսի Ա (1):

Ութերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՅօհան Գեղամացի վարժապետ վարդապետն և
2. զՎանցի Բաղտասար վարդապետն՝ յառաջնորդութիւն Կարմրաւոր վանիցն և ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, որ յառաջ նուիրակեաց Վան և այժմ ևս եղև նուիրակ նոյնոյ տեղւոյն. և ի հինգերորդ կիրակէին Եղիսկան Յիսնակին, Յունիսի ԻԶ (26):

Իններորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զմիաբանսն սրբոյ Աթոռոյս

1. զՊօղոս վարդապետ Պոլսեցի,
2. զՍարգիս վարդապետ Կուզիկեան և
3. զԳրիգոր վարդապետ Մունջուսցի: Եւ
4. զԱրապկերու առաջնորդ Պետրոս վարդապետ,
5. զՏիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետ Բոյաճի օղլին և
6. սրբոյ Երուսաղէմայ միաբան Գաբրիէլ վարդապետ. յերկրորդում կիրակէին որ յետ սրբոյ Խաչվերացին, ի Սեպտեմբերի ԺԸ (18):

Ի ՌՄԺԵ (1766) թուոջն.

Տասներորդ՝ ձեռնադրեաց

[1] զԿարապետ,
[2] զՅօսէփ և
[3] Փիլիպպոս սարկաւագունսն՝ աբեղայս. Յիսնակաց բարեկենդան կիրակէին, ի Նոյեմբերի տասնեւինն:

Ի ՌՄԺԶ (1767) թուոջն.

Մեւտասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զմիաբանսն սրբոյ Աթոռոյս

1. զԵղվարդեցի լուսարար Գրիգոր վարդապետ,
2. զԿարբեցի Սարգիս վարդապետ,
3. զԱռնեցի Յօսէփ վարդապետ,
4. զԿարբեցի վարժապետ Ստեփաննոս վարդապետ,
5. զյՕշականցի գրագիր Երեմիայ վարդապետ, նաև
6. զՍպահանցի Մկրտիչ վարդապետ՝ զնուիրակն սրբոյն Երուսաղէմի. ի Սահակայ հայրապետի տօնին, ի Փետրվարի ԺԱ (11):

Երկոտասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՄինաս վարդապետ միաբանն սրբոյ Աթոռոյս և
2. զԱւետիք վարդապետն՝ ի յառաջնորդութիւն սրբոյ վանիցի Խորվիրապայ և ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս. և
3. զՍարգիս վարդապետ՝ ի յառաջնորդութիւն Բաբերդու. Վարդավառի բարեկենդան կիրակէին, ի Յուլիսի ութն:

Ի ՌՄԺԷ (1768) թուոջն.

Երեքտասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զիս՝ զմեղսաներկ ծառայս իւր զՄկրտիչ վարդապետս, նաև
2. զԿեղու Սուրբ Կարապետի առաջնորդ Յօհան վարդապետն և
3. զԱստապատեցի Միքայէլ վարդապետն՝ յառաջնորդութիւն նոյն գեղջ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի վանիցն. ի չորրորդ կիրակէին եղիսկան Յիսնոկին, Յունիսի ԺԵ (15):

Չորեքտասներորդ՝ յառաջ քան զայս, Յունիսի Ա (1)՝ երկրորդ կիրակէին որ էր տօն Սրբոյ Էջմիածնի, ետ մասնաւոր գաւազան

[1] Յօսէփ և
[2] Փիլիպպոս աբեղայիցն:

Ի ՌՄԺԸ (1769) թուոջն.

Հնգետասներորդ՝ ձեռնադրեաց

[1] զՍտեփաննոս և
[2] զԻսահակ սարկաւագունսն զաբեղայս. ի Յա տօնի Վարագայ // Սուրբ Խաչին, ի Սեպտեմբերի ԻԷ (27):

Ի ՌՄԺԹ (1770) թուոջն.

Վեշտասաներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զչորեսին միաբանսն սրբոյ Երուսաղէմի՝ ի միաբանութիւն նմին, ըստ խնդրոյ նորին պատրիարգ Պօղոս վարդապետին. այսինքն՝

1. զԿեսարացի Սարգիս վարդապետն, որ էր նուիրակ Եդեսկիոյ,
2. զԱմթեցի Աւետիս վարդապետն, որ էր նուիրակ նոյն տեղւոյն,
3. զՆախիջևանցի Զաքարիա վարդապետն, որ էր նուիրակ Կարնոյ, և
4. զՀամատանցի Յովհաննէս վարդապետն, որ էր նուիրակ Հնդկաց. ընդ որոց ձեռնադրեաց՝
5. զՔանաքեռցի Յովհաննէս վարդապետն՝ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս. ի բարեկենդանի միջին կիւրակէին, որ յետ տօնի սրբոյն Իսահակայ հայրապետին, ի Փետրվարի Է (7)։

Ի ՌՄԻ (1771) թուոջս.

Եօթնեւտասներորդ՝ ետ մասնաւոր գաւազան

[1] Ստեփաննոս և
[2] Իսահակ աբեղայիցն. Հոգեգալուստ կիւրակէին, ի Մայիսի ԺԵ (15)։

Ութուտասներորդ՝ ձեռնադրեաց

[1] զգրագիր Ղուկիանոսն և
[2] զիւր սպասաւոր Յովհաննէս, և
[3] լուսարարի սպասաւոր Մարտիրոս սարկաւագունսն աբեղայս։ Ընդ սոցին և
[4] զԵփրեմ սպասաւորն իւր՝ սարկաւագ. ի Գիւտ Խաչի կիւրակէին, ի Հոգտեմբերի ԻԳ (23)։

Ինեւտասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՏաթևու առաջնորդ Ղազար վարդապետն և
2. զԿարսեցի Սուքիաս վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, զոր և կարգեաց առաջնորդ Կարսայ. և
3. զԹամարզայու առաջնորդ Միքայէլ վարդապետն, և
4. զԱգուլեցի Յարութիւն վարդապետն ևս՝ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս։ Նաև զչորեսին բնական միաբանսն սրբոյ Աթոռոյս, այսինքն՝
5. զԴաւիթ վարդապետն Թիֆլիզեցի,
6. զՅովսէփ վարդապետն Սանահնեցի,
7. զԳալուստ վարդապետն Աշտարակեցի և
8. զՓիլիպպոս վարդապետն Առնճեցի. ի վեցերորդ կիւրակէին Յայտնութեան յիսնակին, ի Դեկտեմբերի ԻԵ (25)։

Ի ՌՄԻԱ (1772) թուոջս.

Քսաներորդ՝

[1] Ղուկիանոս,
[2] Յովանէս,
[3] Մարտիրոս և
[4] Սողոմօն աբեղայիցն ետ մասնաւոր գաւազան. ի տօնի առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, ի հինգշաբաթ, ի Դեկտեմբերի ԻԷ (27)։

Ի ՌՄԻԲ (1773) թուոջս.

Քսան և միներորդ՝ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր

[1] զՆերսէս,
[2] զԽաչատուր և
[3] զԵփրեմ սարկաւագունսն՝ աբեղայս. ի վեցերորդ կիւրակէին, որ զկնի Սրբոյ Խաչին և տօնի սրբոց Աւետարանչացն, ի Հոկտեմբերի քսան։

Յբ Քսան և երկուներորդ՝ ետ գաւազան ծայրագոյն վարդապետութեան միաբանիցն սրբոյ Աթոռոյս, այսինքն՝

[1] Եղեգաձորցի Աբրահամ,
[2] լուսարար Գրիգոր,
[3] աթոռական Գալուստ,
[4] վարժապետ Ստեփան,
[5] գրագիր Երեմիա,
[6] նախապատիւ սպասաւոր Մկրտիչ,
[7] Քանաքեռցի Յովհաննէս և
[8] Սանահնեցի Յովսէփ եպիսկոպոսացն. տասներորդ կիւրակէին զկնի Սրբոյ Խաչին, ի Նոյեմբերի ԺԷ (17)։

Քսան և երեքերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԹարվիզու նուիրակ Մեսրոպ,
2. զԷջմիածնեցի Պետրոս,
3. զԿարնեցի Յակոբ,
4. Սրբոյն Թոմայի միաբան Մատթէոս,
5. Սուրբ Հռիփսիմէի վանից առաջնորդ Աւետիք,
6. զգրագիր Մատթէոս,
7. ամբարտար Իսահակ,
8. Ռէթէոս վարդապետի սպասաւոր Գրիգոր և
9. զիւր իսկ Վեհին սրբազանի սպասաւոր Իսահակ վարդապետսն. հինգերորդ կիւրակէին ձմեռան յիսնակի, և ի Դեկտեմբերի ԺԵ (15)։

Ի ՌՄԻԳ (1774) թուոջս.

Քսան և չորսերորդ՝

1. Ներսէս,
2. Խաչատուր և
3. Եփրեմ աբեղայիցն ետ մասնաւոր գաւազան. ի Տեառնընդդառաջի աւուրն, ի Փետրվարի ԺԴ (14)։

Քսան և հինգերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԿեսարացի Մատթէոս վարդապետն՝ ի միաբանութիւն Սրբոյ Կարապետի վանիցն և ի վանահայրութիւն Սրբոյ Դանիէլի վանից, ընդ նմին և
2. զՍեպաստիոյ Սրբոյ Հրեշտակապետի վանից առաջնորդ Յովհաննէս վարդապետն և
3. զԱմասիոյ և զՄարսվանու առաջնորդ միւս Յովհաննէս վարդապետն. երկրորդ Ծաղկազարդի կիւրակէին, Յունիսի մէկն։

Քսան և վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Փառակեցի Իսահակ վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս և
2. զսրբոյն Սաղիմայ միաբան Կարբեցի Կարապետ վարդապետն՝ ի միաբանութիւն սրբոյ Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանիցն. ի վեցերորդ կիւրակէին որ զկնի Սրբոյ Խաչին և տօնի սրբոց Աւետարանչացն, ի Հոկտեմբերի ԺԹ (19)։

Այլ և Թոխաթեցի Ճռատուն օղլի Յարութիւն վարդապետ ոմն ի ՌՄԺԵ (1766) թուոջն գնացեալ ի Գեանջայ, յԻսրայէլէն եպիսկոպոս ձեռնադրեցաւ։ Զոր իմացեալ սրբազան Վեհին, ընդ բանիւ արար զնա, և մնաց այնպէս ի յերկար ժամանակս։ Ապա զոչացեալ դիմեաց ի սուրբ Աթոռս՝ առ ոտս սրբազան Վեհին, բերելով և զաղերսանաց թուղթս վասն իւր առ սրբազան Վեհին՝ ի Պոլսոյ պատ-

ռիարգ Գրիգոր վարդապետէն։ Եւ սրբազան Վեհին ներեաց նմա և զապաշխարհանս եղեալ ի վերայ, պահեաց առ ժամանակ մի։ Յետոյ արար զնա առաջնորդ Կարնոյ և զկնի միոյ տարւոյ եբեր ի սուրբ Աթոռս և, ըստ խնդրոյ Կարնոյ ժողովրդեանն, ետ նմա զիշխանութիւն եպիսկոպոսութեան այսու կերպիւ. զի թէպէտ անվաւեր և ապօրինաւոր էր 4ա // ձեռնադրութիւնն նորին, որ յԻսրայէլէն, ըստ այնմ, զի ի մերմէ վիճակէ էր, բայց որովհետև օծեցեալ, էր, մանաւանդ զի և իւղն յայնմ ժամանակի. յորում ձեռնադրեալ էր զնա, դեռ չէր բանադրեցեալ, վասն որոյ ոչ էօծ զնա սրբազանն կրկին, այլ զգեստաւորեցուցեալ զնա ընդ միւս նորընծայիցն վերոյ գրեցելոց, ուրոյն ի նոցանէ, և նախ քան զպատարագն երեր առաջի մեծի սեղանոյն և զփոխ մի Աւետարան ընթերցեալ ի վերա նորին, ետ նմա ըստ կարգի ձեռնադրութեան՝ զթագ, զմատանի, զգաւազան և զԱւետարան ի գիրկն, բաց ի յօծմանէ։ Եւ այսպէս, զանընդունակ եպիսկոպոսութիւնն նորին արար ընդունելի և վերստին արարեալ առաջնորդ Կարնոյ, փառաւորութեամբ դարձոյց անդ։

Ի ՌՄԻԴ (1775) թուոջս.

Քսան և եօթներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՍրբոյն Սաղիմայ միաբան Հաճնցի Սարգիս վարդապետն,

2. զԹրակիոյ առաջնորդ Ցակոբ վարդապետն,

3. զՇողակաթի առաջնորդ Ստեփան վարդապետն և

4. զՁորագեղու անապատի առաջնորդ Ղազար վարդապետն. ընդ Տեառնյառաջի օրն, ի Փետրվարի ԺԴ (14)։

Քսան և ութներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՍասնցի Կարապետ վարդապետ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, որ երբեմն էր յԱմթայ առաջնորդ,

2. զՁուղայեցի Աւետիս և

3. Ղուկաս վարդապետաքն՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, և

4. զԿօնօնոսի առաջնորդ Բաղտասար վարդապետն. ի տօնի Վարագայ Խաչին, ի Սեպտեմբերի ԻԷ (27)։

Քսան և իններորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՇամբեցի Յովհաննէս վարդապետն՝ յառաջնորդութիւն Սրբոյ Կարապետի անապատին Կտուցու, և

2. զԽարբերդու առաջնորդ Իսահակ վարդապետն՝ յառաջնորդութիւն Դատմայ վանք կոչեցեալ Սուրբ Աստուածածնի վանիցն. առաջին կիւրակէին Յայտնութեան յիսնակին, ի Նոյեմբերի ԻԲ (22)։

Ի ՌՄԻԵ (1776) թուոջս.

Երեսներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Սրբոյն Գէորգայ վանից առաջնորդ Բարսեղ վարդապետ և

2. մեր ժամանաց Թիֆլիզեցի Յարութիւն վարդապետն. զկնի Հոգւոյ գալստեան հինգերորդ կիւրակէի երեքշաբթի օրն՝ Յունիսի քսան և ութ։

Ի ՌՄԻԶ (1777) թուոջս.

Երեսուն և միներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Սերաստիոյ Սուրբ Նշանի վանից առաջնորդ Ցակոբ վարդապետն՝ ի յառաջնորդութիւն նոյն վանիցն և քաղաքին. Հոգեգալուստ կիւրակէին՝ Յունիսի չորս։

4բ // **Երեսուն և երկուերորդ՝** ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԿեսարացի Պետրոս վարդապետն, որ էր վէքիլ Կոստանդնուպօլսոյ պատրիարքին, ըստ խնդրոյ նոյն պատրիարք Զաքարիա վարդապետին և իշխանացն նոյնոյ քաղաքին. սուրբ Ցակոբայ բարեկենդան կիւրակէին, ի Դեկտեմբերի Ժ (10)։

Ի ՌՄԻԷ (1778) թուոջս.

Երեսուն և երեքերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՍալմաստցի Ստեփան վարդապետն՝ ի յառաջնորդութիւն Սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյն. երկրորդ կիւրակէի՝ զկնի Հոգւոյ գալստեանն, Յունիսի Ժ (10)։

Երեսուն և չորսերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՍանահնեցի Ցակոբ և

2. զՁուղայեցի Գալուստ վարդապետսն՝ զմիաբանսնն Սրբոյ Աթոռոյս. և

3. զԱկնցի Կարապետ վարդապետն՝ ի յառաջնորդութիւն Արապկերու քաղաքին. ի չորրորդ կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեանն՝ Յունիսի քսան և չորս։

Ի ՌՄԻԸ (1779) թուոջս.

Երեսուն և հինգերորդ՝ ետ ծայրագոյն գաւազան

1. Առնջեցի Փիլիպպոս,

2. Ըզնաբերթցի Մեսրոպ,

3. Կարնեցի Ցակոբ,

4. գրագիր Մաթէոս,

5. իւրոյ իսկ ինքեան սրբազան Վեհին աշակերտ Գեղամացի Իսահակ և

6. Սանահնեցի Ցակոբ վարդապետացն. ի Տընտեսի կիւրակէին՝ ի Մարտի երեք։

Երեսուն և վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՏաթևու առաջնորդ Յովակիմ վարդապետն. ի Գիւտ Խաչին, ի Հոկտեմբերի քսան և եօթն։

5բ // **Ղուկաս Սրբազան**

Ի ՌՄԻԹ (1780) թուոջն մերում, երկրորդ կիւրակէին զկնի Վարդավառին և յամսեանն Օգոստոսի երկրորդում աւուրն Վեհն օծաւ ընդհանուր կաթողիկոս ամենայն Հայոց։

Արդ, զկնի օծմանն իւրոյ, Վեհ հայրս մեր զորս ձեռնադրեաց թէ զեպիսկոպոսս և թէ զայլ աստիճանաւորս, ահա ի ներքոյ ցուցանեմք.

Ի ՌՄԼ (1781) թուոջն.

Նախ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՄկրտիչ վարդապետն Շօնոթեցի՝ ի յառաջնորդութիւն Իւչքիլիսէ կոչեցեալ վանից Սրբոյն Յոհաննու Կարապետին և համայն վիճակի նորին։

2. Եւ զՇոնոթեցի Ղազար վարդապետն և

3. զԱշտարակեցի գրագիր Ղուկիհանոս վարդապետն՝ ի միաբանութիւն Ցիսնակաց բարեկենդան կիւրակէին, ի Հոկտեմբերի ելն։

Ի ՌՄԼԱ (1382) թուոջն.

Երկրորդ՝ ձեռնադրեաց

[1] զսպասաւորն իւր Աստուածատուր և

[2] զգրագիր Անդրէաս սարկաւագունսն՝ աբե-

դայս. ի տօնի Տեառնընդառաջին, ի Փետրվարի ԺԴ (14):

Ի սոյն օրս ձեռնադրեաց զսպասաւորսն իւր՝

[1] զԱնանիայն,

[2] զԳրիգորն,

[3] զՅակոբն և

[4] զգրիչ Յովհաննէսն՝ սարկաւագունս:

Երրորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՄարկոս վարդապետն Շատախեցի՝ ի յառաջնորդութիւն և ի հայրութիւն Կտուցու սրբոյ Անապատին,

2. զՍաղեցի Յօհան և

3. Եղեգաձորեցի Ահարոն վարդապետքն ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի նոր կիւրակէին Զատկի, յԱպրիլի Գ (3):

Չորրորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՅօհաննէս վարդապետն, որ ի գեղջէն Ահրոնայ՝ ի յառաջնորդութիւն Մշու Սուրբ Յովհաննիսի վանիցն և՝

2. զՅարութիւն վարդապետն Կասրկեցի՝ ի յառաջնորդութիւն Սօրսրու Սուրբ Գէորգայ վանիցն (որ ի յերկիրն Խարբերդու). ի չորրորդ կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեան՝ Յունիսի ԺԲ (12):

Հինգերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՅակոբ վարդապետն Զուղայեցի՝ ի միաբանութիւն նոյն Զուղայու Ամենափրկչի վանիցն և ի յաջորդութիւն նորին առաջնորդ Մկրտիչ վարդապետին. Յիսնակաց չորրորդ կիւրակէին՝ ի Դեկտեմբերի ԺԸ (18):

Ի ՌՄԼԲ (1783) թուոջն.

Վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԱստուածատուր վարդապետն Նիչիացի՝ ի յառաջնորդութիւն Մշու Սուրբ Կարապետի վանիցն,

2. զԿեսարացի Յարութիւն վարդապետն՝ ըստ խնդրոյ իւրոյ, ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս և ի յօժանդակութիւն Պոլսոյ պատրիարքին,

3. զԹրակացի Յարութիւն և

4. զԵւդոկացի Պետրոս վարդապետսն՝ ի միաբանութիւն Սրբոյն Սաղիմայ,

5. զՄարտիրոս վարդապետն Դդմաշենցի և

6. զՆերսէս վարդապետն // Եղեգնաձորցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս ի բարեկենդանի միջի կիւրակէին, որ զկնի տօնի սրբոյն Իսահակայ Պարթևին, ի Փետրվարի ԺԹ (19):

Եօթներորդ՝ ետ մասնաւոր գաւազան

[1] վարժապետ տէր Կարապետին Նախիջևանցւոյ,

[2] տէր Գրիգորին Խամսեցւոյ, և սպասաւորացն իւրոց՝

[3] տէր Աստուածատուրին և

[4] տէր Անդրէասին. որ Զօրէնի կիւրակէին, ի Մարտի հինգն:

Ութերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԴաւիթ վարդապետն Հախպատեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի նոր կիւրակէին Սրբոյ Զատկի՝ յապրիլի ԻԳ (23):

Իններորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԱբրահամ վարդապետն Թրակացի՝ ի յառաջնորդութիւն Սանահնոյ Սուրբ Աստուածածնի վանիցն,

2. զՅովակիմ վարդապետն Դրախտակեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, ի խնդրոյ Նիկոմիդեայ առաջնորդ Պետրոս ծերունի վարդապետին (ըստ ս.բրում հոգեծին զաւակ իւր էր ի մանկութենէ),

3. զժամասաց Ստեփաննոս վարդապետն Դուռաղցի և

4. զԲալուեցի Յովհաննէս վարդապետն՝ յառաջնորդ Ուրհայու. չորրորդ կիւրակէ զկնի Հոգւոյ գալստեանն, ի Յուլիսի Բ (2):

Ի ՌՄԼԳ (1784) թուոջն.

Տասներորդ՝ ետ ծայրագոյն գաւազան միաբանացն Սրբոյ Աթոռոյս, այսինքն՝

[1] Մինաս,

[2] Մկրտիչ (որ է Իւչքիլիսէ կոչեցեալ վանից առաջնորդն),

[3] Ղուկիսանոս,

[4] Ահարոն,

[5] Մարտիրոս,

[6] Ներսէս և

[7] Ստեփան եպիսկոպոսացն. յԱռաջաւորաց բարեկենդան կիւրակէին, Յունվարի ԻԱ (21):

Մետասաներորդ՝ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր

[1] զԳրիգոր սարկաւագն. ընդ նմին

[2] զՂազար,

[3] զՄարութայ (որ և Բարսեղ անուանեաց) և

[4] զՍտեփաննոս սարկաւագունսն աբեղայս. Անառակի կիւրակէին, ի Փետրվարի ԻԵ (25):

Երկոտասաներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԳէորգ վարդապետն Բերիացի՝ ի միաբանութիւն Սրբոյն Սաղիմայ, որ էր նուիրակ Կարնոյ. ի տօնի Վերացման Սրբոյ Խաչին, ի Սեպտեմբերի ԺԵ (15):

Ի ՌՄԼԴ (1785) թուոջն.

Երեքտասաներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՄիքայէլ վարդապետն Էտրէնեցի՝ յառաջնորդութիւն Էտրէնու քաղաքին,

2. զՅարութիւն վարդապետն Արապկերցի և

3. զվեքիլ Խաչատուր վարդապետն Գեղամացի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի մէջ ութօրէից կիւրակէին, ի Յունվարի ԺԲ (12):

Չորեքտասաներորդ՝ ետ ծայրագոյն գաւազան վերոյ գրեցեալ

[1] Միքայէլ և

[2] Խաչատուր վարդապետացն. օրն հինգշաբթի, ի տօնի Պետրոսի հայրապետին, Յունվարի ԺԶ (16):

Եր // **Հնգետասաներորդ՝** ետ մասնաւոր գաւազան

[1] Բալուեցի տէր Բարաղամին և սպասաւորին իւրոյ և օրհնածին որդւոցն իւրոց

[2] տէր Գրիգորին,

[3] տէր Ղազարին,

[4] տէր Բարսեղին և

[5] տէր Ստեփանին. Տեառնընդառաջի օրն, ի Փետրվարի ԺԴ (14):

Վեշտասաներորդ՝ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր

[1] զԱնանիա,

[2] զՅակոբ,

[3] զՅովհաննէս և

[4] զմիւս երբեմն նստար Յովհաննէս սարկաւա-

գունեն՝ արեղայս: Բայց զերկուց անուանեն փոխեաց՝ զԱնանիայն Թադէոս և նոստար Յովհաննէսն՝ Աբրահամ. երկրորդ կիւրակէին Մեծի պահոց: Ընդ սոցա և

[5] Զաքարիայն՝ սարկաւագ. ի Մարտի ինն:

Եօթնտասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Շամբեցի Վարդան,
2. Կաֆայեցի Աստուածատուր,
3. Մանիսեցի Եփրեմ և
4. Գեղամացի Յոհան վարդապետն՝ զմիաբանեն Սրբոյ Աթոռոյս. ի չորրորդ կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեանն, Յուլիսի վեց:

Ութուտասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԲալուեցի Գրիգոր վարդապետն՝ յառաջնորդութիւն նոյն Բալուայ Քաղցրահայեաց կոչեցեալ Սուրբ Աստուածածնի վանիցն. ընդ նմին և Սրբոյ Աթոռոյս
2. լուսարար Մարտիրոս վարդապետն Գառնեցի,
3. զՇիրաչի Գրիգոր վարդապետն Էջմիածնեցի. ի բարեկենդան կիւրակէի Վարդավառի, Յուլիսի քսանն:

Ի ՌՄԼԵ (1786) թուոջն.

Իննտասներորդ՝ շնորհեաց զմասնաւոր գաւազան վարդապետական իշխանութեան օրհնաձին որդւոցն իւրոց

[1] տէր Թադէոսին,
[2] տէր Յակոբին,
[3] տէր Յովհաննիսին և
[4] տէր Աբրահամին. Յունվարի ԺԳ (13), ի տօնի թլփատութեան Տեառն մերոյ:

Քսաներորդ՝ ետ գաւազան ծայրագոյն վարդապետութեան միաբանացն Սրբոյ Աթոռոյս, այսինքն՝

[1] Բերթումեան Պետրոս,
[2] Կաֆայեցի Աստուածատուր,
[3] Մանիսեցի Եփրեմ,
[4] Գեղամացի Յոհան,
[5] լուսարար Մարտիրոս,
[6] Շիրաչի Գրիգոր և
[7] Արապկերցի Կարապետ վարդապետացն. Տեառնընդառաջ օրն, ի Փետրվարի ԺԴ (14):

Քսան և միներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԴանիէլ վարդապետն Սուրմարեցի՝ զմիաբանն Սրբոյ Աթոռոյս. ի չորրորդ կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեանն, Յունիսի 28:

Ի ՌՄԼԶ (1787) թուոջն.

Քսան և երկուներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՊետրոս վարդապետն Զմշկածակցի՝ ի միաբանութիւն Սրբոյն Սաղիմայ, որ էր նուիրակ Հընդկաց. ի մէջ ութօրէից հինգերորդում աւուր կիւրակէի հրաշափառ Ծննդեանն Քրիստոսի, Յունվարի տասն:

7ա // **Քսան և երեքներորդ՝** ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զժամօրհնող յՕշականցի Ստեփան և
2. զՄօղնեցի վարժապետ Նիկողայոս վարդապետսն՝ զմիաբանսն Սրբոյ Աթոռոյս. ի հինգերորդ կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեանն, Յունիսի Ի (20):

Քսան և չորսներորդ՝ ետ գաւազան ծայրագոյն վարդապետութեան միաբանացն Սրբոյ Աթոռոյս, այսինքն՝

1. Թոխատու նուիրակ Դանիէլ,
2. ժամօրհնող Ստեփան և
3. վարժապետ Նիկողայոս վարդապետացն. ի հինգերորդ կիւրակէին զկնի Սրբոյ Խաչին, Հոկտեմբերի Ժ (10):

Ի ՌՄԼԷ (1788) թուոջն.

Քսան և հինգերորդ՝ ետ զաստիճան ջահընկալութեան սպասաւորին իւրոյ

[1] տիրացու Փիլիպպոսին. յաւուր հրաշափառ Յարութեանն Քրիստոսի՝ սրբոյ Զատկի կիւրակէին, յԱպրիլի ԺԶ (16):

Քսան և վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԹէոդորոս վարդապետն Վանցի և
2. զԱբրահամ վարդապետն Մարաշցի՝ ի միաբանութիւն Սրբոյն Սաղիմայ, ի խնդրոյ նորին պատրիարգ Յովակիմ վարդապետին: Եւ
3. զՅոհան վարդապետն Շամբեցի՝ յառաջնորդութիւն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի վանիցն և բոլոր վիճակին նորին. ի Վարագայ Սրբոյ Խաչի կիւրակէին և ի Հոկտեմբերի մէկն:

Ի ՌՄԼԸ (1789) թուոջն.

Քսան և եօթներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զմիաբանսն Սրբոյ Աթոռոյս

1. զՅակոբ վարդապետն Շամախեցի և զիւր օրհնաձին զաւակունսն՝
2. զԱստուածատուր և
3. զգրագիր Անդրէաս վարդապետսն. ի Մեծի Պահոց Անառակի կիւրակէին, ի Մարտի Դ (4):

Հասուցեալ Մկրտիչ աշխատասէր վարդապետին զգրութիւն անուանց և ժամանակի ձեռնադրեցելոց և սրբազան Վեհէն մինչև ցայս վայր, վճարեաց զկեանս իւր: Ապա այսուհետև, հրամանաւ աստուածընտիր և սրբազան Վեհի՝ տեառն մերոյ, ես՝ յետնեալ ծառայս նորին Գալուստ սարկաւագս, սկըսայ գրել զնոսա, որք յայսմհետէ ձեռնադրեցան:

Ի ՌՄԼԸ (1789) թուոջ.

Քսան և ութներորդ՝ ձեռնադրեաց

1. զտիրացու Վրթանէսն,
2. զտիրացու Մկրտիչն և
3. զսպասաւորն իւր զտիրացու Փիլիպպոսն՝ աւագ սարկաւագունս. ի Սեպտեմբերի Բ (2), ի չորրորդ կիւրակէի որ զկնի Փոխման Սուրբ Աստուածածնին:

Քսան և իններորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԲարդուղիմէոս վարդապետն Պոլսեցի, ըստ խնդրոյ պատրիարգ Զաքարիա վարդապետին, ի յառաջնորդութիւն Իզնիմիտու քաղաքին: Ընդ նմին և
2. զԴաւիթ վարդապետն Թիֆլիզեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, ութերորդ կիւրակէին զկնի Սրբոյ Խաչին, ի Նոյեմբերի Դ (4):

Ի ՌՄԼԹ (1790) թուոջ.

Երեսներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՓիլիպպոս վարդապետն Ակնցի, ի յառաջնորդութիւն Ղուլայու Սրբոյ Գէորգայ վանից, զկնի Հոգւոյգալստեանն երկրորդ կիւրակէին, ի Մայիսի ԻԶ (26):

7բ // **Երեսուն և միերորդ՝** ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՑակոբ վարդապետն Պոլսեցի, որ է աշակերտ Պոլսոյ Զաքարիա վարդապետին՝ ի առաջնորդութիւն Եւդոկիա քաղաքին. ի չորրորդ կիւրակէին զկնի Վարդավառին, Յուլիսի ԺԴ (14):

Ի ՌՄԽ (1791) թուոջ.

Երեսուն և երկուերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Նախչուանցի Գէորգ վարդապետն՝ յառաջնորդութիւն Սրբոյ Թադէոսի Առաքելոյ վանից և

2. Թօխաթեցի Մարտիրոս վարդապետն՝ յառաջնորդութիւն Արպակերու: Ընդ նոսին և զմիաբանսն Սրբոյ Աթոռոյս՝

3. Գրիգոր վարդապետն Թիֆլիզեցի և

4. Յովսէփ վարդապետն Կեսարեզցի. ի Յունվարի ԺԲ (12):

Երեսուն և երեքերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԱլէքսան վարդապետն Կարնեցի՝ ի յառաջնորդութիւն Հասանկալայու Սուրբ Աստուածածնի վանիցն. ի Փետրվարի Ը (8), ի տօնի Սրբոյն Սարգսի Զօրավարին:

Երեսուն և չորսերորդ՝ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր

1. զԶաքարիա,

2. զվէքիլ Գրիգոր,

3. զգրաշար Աղէքսանդր և

4. զլուսարարի Ղուկաս սարկաւագն՝ քահանայս. ի Մարտի Բ (2), ի Մեծի Պասոց երկրորդ կիւրակէին:

Երեսուն և հինգերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զվարժապետ Մարգար վարդապետն Շամքեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի Յուլիսի ԻԲ (22), ի Վարդավառի երրորդ օրն, երեքշաբթի:

Երեսուն և վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Շէնքուշայ Սուրբ Աստուածածնի վանից առաջնորդ Յովհաննէս ծերունի վարդապետն. ի յօգոստոսի Ժ (10), ի Վերափոխման Սուրբ Աստուածածնի բարեկենդանի կիւրակէին:

Երեսուն և եօթներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զօրինաձին որդիսն Զաքարիա պատրիարգին պոլսոյ՝

1. զվէքիլ Յովհաննէս վարդապետն Պոլսեցի և

2. զՊօղոս վարդապետն Կեսարացի՝ ի յառաջնորդութիւն Պրուսայու. և

3. զԱնդրէաս վարդապետն Պոլսեցի՝ ի յառաջնորդութիւն Գաղատիոյ. ի յօգոստոսի ելն, զկնի փոխման Սուրբ Աստուածածնի երրորդում կիւրակէի:

Ի ՌՄԽԱ (1792) թուոջ.

Երեսուն և ութներորդ՝ ետ գաւազան իշխանութեան մասնաւոր վարդապետութեան օրինաձին որդւոցն իւրոց

1. տէր Զաքարիային յՕշականցւոյ,

2. վէքիլ տէր Գրիգորին ևս յՕշականցւոյ,

3. տէր Աղէքսանդրին Էջմիածնեցւոյ և

4. լուսարարի սպասաւոր տէր Ղուկասին յՕշականցւոյ. ընդ որս և

5. միւս տէր Գրիգորին և

6. տէր Փիլիպպոսին Եւդոկացւոց. նաև

7. տէր Յարութիւնին Ասնջեցւոյ. ի Յունվարի ԺԳ (13), յաւուր տօնի Թլփատութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Երեսուն և իններորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զօրինաձին որդին իւր

1. զԳրիգոր վարդապետն յՕշականցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, ի Յունիսի Ի (20), զկնի Հոգւոյ գալստեանն չորրորդում կիւրակէին:

Քառասներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԿըլկը կոչեցեալ Յովհաննէս վարդապետն Մշեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Կարապետի վանիցն որ ի Տարօն,

2. զԳրիգոր վարդապետն Խամսեցի և

3. զօրինաձին որդին իւր զԲարսեղ վարդապետն Աշտարակցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի Դեկտեմբերի Դ (4), ի տօնի սրբազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Ի ՌՄԽԲ (1793) թուոջ.

Քառասուն և միերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԳրիգոր վարդապետն Մոկացի՝ ի յառաջնորդութիւն և ի հայրութիւն Կտուցու սրբոյ անապատին, ընդ նմին և

2. զՎանայ գործավճար նուիրակ Մարտիրոս վարդապետն Կեսարացի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի Մայիսի ԻԹ (29), որ զկնի սրբոյ Զատկի Յարութեանն Քրիստոսի ի վեցերորդ կիւրակէին:

Ցա // **Քառասուն և երկուերորդ՝** ձեռնադրեաց եպիսկոպոս զձեռնասուն սպասաւորսն իւր և զօրինաձին որդիսն

1. զԹադէոս վարդապետն Ապարանցի և

2. զՑակոբ վարդապետն Պոլիսցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, ի Յուլիսի Ժ (10), զկնի Հոգւոյ գալստեանն չորրորդում կիւրակէի:

Քառասուն և երեքերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԱստուածատուր վարդապետն Արտկեցի՝ ի յառաջնորդութիւն Մշու Սուրբ Յովանիսի վանիցն. ընդ նմին և զօրինաձին որդիսն իւր՝

2. զշորապան Ղազար վարդապետն Սասունցի և

3. զժամասաց Ստեփաննոս վարդապետն Թիֆլիզեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս, ի հոկտեմբերի Թ (9), ի հինգերորդ կիւրակէին զկնի Սրբոյ Խաչին:

Քառասուն և չորսերորդ՝ ետ գաւազան իշխանութեան ծայրագոյն վարդապետութեան

1. Շամախեցի գործապետ Յակոբ. և օրինաձին որդւոցն իւրոց

2. Աստուածատուր և

3. գրագիր Անդրէաս. նաև

4. հիւրընկալ Յովսէփ,

5. վարժապետ Մարգար,

6. Օշականցի Գրիգոր,

7. Ուռումէլու նուիրակ Խամսեցի Գրիգոր,

8. Աշտարակցի Բարսեղ,

9. Վանայ նուիրակ Կեսարացի Մարտիրոս. և օրինաձին զաւակացն իւրոց

10. Թադէոս և

11. Յակոբ,

12. շորապան Ղազար և

13. Թիֆլիզեցի ժամասաց Ստեփաննոս եպիսկոպոսացն, ի Նոյեմբերի Զ (6), զկնի Սուրբ Խաչի իններորդ կիրակէին:

Քառասուն և հինգերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԿարապետ ծերունի վարդապետն Նախչուանցի՝ ի յառաջնորդութիւն Երնջակու Սրբոյ Կարապետի վանիցն. ընդ նմին և զմիաբանն Ամրտօլու սրբոյ վանից՝

2. զԳրիգոր վարդապետն Վանեցի՝ ի յառաջնորդութիւն նոյնոյ սուրբ վանիցն, ի տեղի Զաքարիա ծերունի վարդապետին. ի Դեկտեմբերի ԺԱ (11), ի Սուրբ Յակոբայ պահոց բարեկենդանի կիրակէին:

Ի ՌՄԽԳ (1794) թուոջ.

Քառասուն և վեցերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զմիաբանն Սեբաստիոյ Սուրբ Նշանի վանից զԴաւիթ վարդապետն՝ ըստ խնդրոյ առաջնորդ ծերունի Յակոբ եպիսկոպոսին և համայն ժողովրդեանն տեղւոյն, ի յօժանդակութիւն նոյնոյ առաջնորդին՝ սակս ծերութեանն: Ընդ նմին և զընտրեալն գաւակն իւր

2. Գաղատիոյ նուիրակ Յովհաննէս վարդապետն Ակնցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի սոյն թուոջ և ի Ապրիլի Թ (9), ի սուրբ Զատկի կիրակէին:

Քառասուն և եօթներորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

[1] Սրբոյն Հռիփսիմեայ վանից առաջնորդ զՅովհաննէս վարդապետն Թօխաթցի և զՅոգեծին որդին իւր

2. զԱբրահամ վարդապետն Նախչուանցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի Յունիսի ԻԵ (25), զընկնի Հոգեգալստեանն չորրորդ կիրակէին:

Քառասուն և ութերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զձեռնասուն աշակերտն Զաքարիա պատրիարգին Պոլսոյ՝

1. զսէրքիլ Պետրոս վարդապետն Կեսարացի, ի խնդրոյ նորին. ի Յուլիսի ԻԳ (23), յերկրորդ կիրակէին զկնի Վարդավառին:

Քառասուն և իններորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զԳրիգոր վարդապետն Գաղատացի՝ ի միաբանութիւն սրբոյ Երուսաղէմի, ըստ խնդրոյ նորին նորապերճ Պետրոս պատրիարգին: Ընդ նմին և

2. զԱնտոն վարդապետն՝ ի յառաջնորդութիւն Սուրբ Աղբերկայ վանիցն և նորին բոլոր վիճակին, ի Սեպտեմբերի 17, յաւուր Խաչվերացման կիրակէին:

Յիսներորդ՝ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր՝

1. զիս. զԳալուստ, և

2. զտիրացու Յակոբն՝ աւագ սարկաւագունս. , Հոկտեմբերի ԻԱ (21), ի տօնի սրբոց Աւետարանչացն:

8բ // **Յիսուն և միներորդ՝** ձեռնադրեաց զսպասաւորսն իւր

1. զտիրացու Փիլիպպոսն, նաև

2. զտիրացու Վրթանէս սարկաւագունս՝ քահանայս. ի Նոյեմբերի ԺԲ (12) ի իններորդ կիրակէին որ զկնի Սրբոյ Խաչին:

Ի ՌՄԽԴ (1795) թուոջն.

Յիսուն և երկուերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՍտեփաննոս ծերունազարդ վարդապետն՝ առաջնորդութիւն Հաւկու վանք կոչեցեալ Սուրբ Կարապետի վանիցն և բոլոր վիճակի նորին, որ է յերկիրն Զարսանճաղու, ի խնդրոյ բոլոր թեմականաց նորին. ի Մայիս ամսոյ ԻԷ (27)-ին, որ զկնի Հոգւոյ գալստեանն առաջին կիրակէինն:

Յիսուն և երեքերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զմիաբանն սրբոյ Երուսաղէմի:

1. զլուսարար Բաղտասար վարդապետն Կոստանդնուպօլսեցի,

2. զԿարապետ վարդապետն Կեսարացի և

3. զԳէորգ վարդապետն Անդրիանուպօլսեցի, ի խնդրոյ նորին պատրիարգ Պետրոս վարդապետին: Ընդ նոյնն և

4. զժամօրհնող Ալէքսիանոս վարդապետն Կարնեցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի Հոկտեմբերի ԺԱ (11), զկնի Սրբոյ Խաչի չորրորդ կիրակէի հինգշաբաթի օրն, ի տօնի սրբոցն Պանդալեոնի և այլոցն:

Ի ՌՄԽԵ (1796) թուոջն.

Յիսուն և չորսերորդ՝ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր

1. զտիրացու Յակոբն աւագ սարկաւագ, և

2. զտիրացու Բարսեղն՝ ի ջահընկալութիւն. ի տօնի Վարագայ Սուրբ Խաչին, ի Սեպտեմբերի ԻԸ (28):

Ի ՌՄԽԶ (1797) թուոջն.

Յիսուն և հինգերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. զՍողոմօն վարդապետն Էջմիածնեցի և

2. զԳէորգ վարդապետն Պոլսեցի. երկրորդ կիրակէի զկնի Վարդապետին, ի տօնի սրբազանի օծմանն, ի Յուլիսի ԺԹ (19):

Ի ՌՄԽԷ (1798) թուոջն.

Յիսուն և վեցերորդ՝ եպիսկոպոս ձեռնադրեաց

1. զԿեսարացի զՍտեփաննոս և

2. զԿարապետ վարդապետսն՝ զմիաբանն Սրբոյ Կարապետին, ի խնդրոյ նորին առաջնորդ Մատթէոս վարդապետին. և

3. զամբարտար Յովհաննէս վարդապետն Երեվանցի՝ ի միաբանութիւն Սրբոյ Աթոռոյս. ի սուրբ Ծննդեանն երկրորդ աւուրն, ի Յունվարի Է (7):

Յիսուն և եօթներորդ՝ ետ գաւազան իշխանութեան ծայրագոյն վարդապետութեան

1. գործապետ Դաւիթ,

2. ժամօրհնող Ալէքսան,

3. Էջմիածնեցի Սողոմօն,

4. Պոլսեցի Յովհաննէս և

5. Գէորգ,

6. Կեսարացի Ստեփաննոս և

7. Կարապետ, և

8. ամբարտար Յովհաննէս վարդապետացն. ի տօնի Սրբոց Ղևոնդեանց երեքշաբթի աւուրն, ի Փետրվարի Բ (2):

Յիսուն և ութերորդ՝ ձեռնադրեաց եպիսկոպոս

1. Սրբոյն Սաղիմայ միաբան Յակոբ վարդապետն՝ ի խնդրոյ նորին պատրիարգ Պետրոս վարդապետին. ի տօնի Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն, երեքշաբթի աւուրն, ի Փետրվարի Բ (2):